# ՎԱԽՃԱՆՎԵՑ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԴԸ

Ալեքսի Պատրիարքը ծնվել է 1929 թ. փետրվարի 23-ին Տալինում՝ խորապես հավատացյալ ընտանիքում:

Ապագա Պատրիարքն ամեն տարի ծնողների հետ ուխտագնացության է մեկնել տարբեր վանքեր, ինչը մեծապես նպաստել է, որ նա ընտրի հոգևորականի ուղին:

Եկեղեցում ծառայել է դպրոցական տարիներից: 1944 թ. որպես կիսասարկավագ սպասավորել է Տալինում: 1945 թ. մասնակցել է Ալեքսանդր Նևսկի տաճարի վերաբացման աշխատանքներին և 1945-1947 թթ. ծառայել է այս տաճարում և Տալինի Սիմեոնովյան և Կազանյան եկեղեցիներում:

1947 թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի հոգևոր սեմինարիան, որն ավարտել է 1949 թ., ապա ընդունվել է տեղի հոգևոր ակադեմիան:

1950 թ. ապրիլի 15-ին ձեռնադրվել է սարկավագ: Նույն տարում կուսակրոն հոգևորական է ձեռնադրվել և ծառայության նշանակվել Տալինի թեմում:

1953 թ. ավարտել է հոգևոր ակադեմիան՝ ստանալով Աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան:

1957 թ. նշանակվում է Տարտուի Ուսպենյան տաճարի հոգևոր հովիվ:

1961 թ. օգոստոսի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվում և նշանակվում Տալինի և Էստոնիայի թեմի առաջնորդ՝ կատարելով նաև Ռիգայի թեմի առաջնորդի պարտականությունները:

Նույն տարվա նոյեմբերի 14-ին Ալեքսի եպիսկոպոսը նշանակվում է Մոսկվայի պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավարի տեղակալ:

1964 թ. հունիսի 23-ին ստանում է արքեպիսկոպոսական աստիճան:

1964 թ. դեկտեմբերի 22-ին Ալեքսի արքեպիսկոպոսը նշանակվում է Մոսկվայի պատրիարքարանի գործերի կառավարիչ և դառնում Սրբազան Սինոդի անդամ:

1965 թ. մայիսի 7-ին նշանակվում է նաև պատրիարքարանին կից ուսումնական խորհրդի նախագահ, որի պարտականություններից իր խնդրանքի համաձայն ազատվում է 1986 թ. հոկտեմբերի 16-ին:

1963-1979 թթ. եղել է նաև Ս. Սինոդի Քրիստոնեական միության և միջեկեղեցական հարաբերությունների հանձնաժողովի անդամ:

1968 թ. փետրվարի 25-ին Ալեքսի արքեպիսկոպոսը ստանում է միտրոպոլիտութ-

յան աստիճան:

1970-1986 թթ. իրականացրել է ընդհանուր ղեկավարությունը թոշակային կոմիտեի, որի խնդիրն էր ապահովումը հոգևորականության և եկեղեցական հաստատություններում աշխատող աշխարհականների կենսաթոշակային իրավունքների:

Ալեքսի միտրոպոլիտը իր գործուն մասնակցությունն է բերել նաև Ռուսիայի մկրտության 1000-ամյակի հանդիսությունների նախապատրաստմանը:

1986 թ. հունիսի 29-ին նշանակվել է Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ՝ միաժամանակ ղեկավարելով և Տալինի թեմը:

1990 թ. հունիսի 7-ին ընտրվում է Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք: Գահակալությունը կատարվում է հունիսի 10-ին:

Մեծ է Ալեքսի Պատրիարքի դերը Ռուս Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների առավել ընդլայնման գործում: Ռուս Ուղղափառ Եկեղեցու կազմում մասնակցել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ նստաշրջանին (1961 թ. Նյու-Դելի): 1961-68 թթ. եղել է ԵՀԽ կենտրոնական կոմիտեի անդամ: 1964 թ. ընտրվել է Եվրոպայի եկեղեցիների խորհրդի նախագահության անդամ, իսկ 1987 թ. նախագահության քարտուղար: 1972 թ. ընտրվել է նաև Եվրոպայի եպիսկոպոսական խորհրդի անդամ, ելույթներով հանդես է եկել միջեկեղեցական մի շարք համաժողովներում:

Գործուն մասնակցություն է ունեցել նաև միջազգային և ԽՍՀՄ խաղաղասիրական կազմակերպությունների աշխատանքներին: 1963 թ. ընտրվել է Խաղաղության խորհրդային ֆոնդի անդամ:

1975 թ. հիմնված «Հայրենիք» ընկերակցության հիմնադիր խորհրդի անդամ է եղել: Ընտրվել է փոխնախագահ խորհրդա-հնդկական բարեկամության ընկերակցության:

1989 թ. ընտրվել է նոր հիմնված Գթասրտության և առողջապահության խորհրդային ֆոնդի անդամ և նույն թվականին այս կազմակերպության կողմից առաջադրվել և ընտրվել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր:

Ալեքսի Պատրիարքի նախաձեռնությամբ և մասնակցությամբ կազմակերպվել է «Քրիստոնեական հավատը և մարդկային թշնամանքը» (Մոսկվա 1994 թ.) կոնֆերանսը, որին մասնակցեցին քրիստոնեական տարբեր դավանանքների եկեղեցիների ներկայացուցիչները:

Ալեքսի Պատրիարքը նախագահել է քրիստոնեական տարբեր դավանանքների խորհրդատվական կոմիտեի «Հիսուս Քրիստոս երեկ, այսօր և հավիտյան», «Քրիստոնեությունը երրորդ հազարամյակի շեմին» (Մոսկվա 1999 թ.) կոնֆերանսներին և միջկրոնական խաղաղարարական ֆորումին (Մոսկվա 2000 թ.):

Երջանկահիշատակ Պատրիարքը հեղինակ է աստվածաբանական, եկեղեցապատմական, խաղաղության ամրապնդմանը և մի շարք այլ հարցերի նվիրված մի քանի հարյուր հոդվածների և ուսումնասիրությունների, որոնք տպագրվել են եկեղեցական և գիտա-հասարակական ամսագրերում, պարբերականներում և հրատարակություններում:

Ալեքսի Պատրիարքը պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության բարձրագույն պարգևով՝ Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալի շքանշանով:

2004 թ. մայիսի 24-ին Ալեքսի Պատրիարքը ժողովուրդների միջև խաղաղության,

բարեկամության և փոխգործակցության ամրապնդման համար ստացել է ՄԱԿ-ի «Արդարության ջատագով» պարգևը՝ միաժամանակ արժանանալով և տարբեր երկրների պետական բարձր պարգևների:

Իր պատրիարքության տարիներին Ալեքսի Երկրորդը կատարել է բազմաթիվ հայրապետական և հովվապետական այցելություններ թե՛ քրիստոնեական քույր Եկեղեցիների հոգևոր պետերի հրավերներով և թե՛ այցելություն տվել Ռուս Եկեղեցու թեմերին՝ 81 թեմերում լինելով 120 անգամ:

Սրբազան Պատրիարքը առանձնակի կարևորություն էր ընծայում հոգևորականների նոր սերունդ պատրաստելու, աշխարհականների քրիստոնեական աշխարհայացքի ձևավորման ու նոր սերնդի հոգևոր-բարոյական դաստիարակության հարցերին: Այս նպատակով բացվեցին մի շարք նոր հոգևոր սեմինարիաներ, ուսումնարաններ և քրիստոնեական ուսուցման դասընթացներ:

ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած անցումային շրջանում Սրբազան Պատրիարքը առանձնակի կարևորություն էր տալիս Եկեղեցի-պետություն հարաբերություններին նոր բովանդակություն հաղորդելուն:

Կողմնակից լինելով Եկեղեցու առաքելության և պետության գործառույթների հստակ տարանջատմանը՝ միևնույն ժամանակ այն հստակ համոզումն ուներ, որ Եկեղեցու հոգևոր փրկչական առաքելությունը, ինչպես և պետության՝ հասարակությանը ծառայելը պահանջում են փոխադարձ ազատ համագործակցություն եկեղեցական, պետական և հասարակական ինստիտուտների միջև:

Գործունեության այս շրջանում պետական-հասարակական տարբեր կառույցների հետ համաձայնություն ձեռք բերվեց եկեղեցական արարողություններից ու հոգևոր քարոզչությունից բացի ծավալել բարեսիրական գործունեություն հիվանդանոցներում, տարեցների տներում, ազատազրկման վայրերում, ինչպես և աջակցել չքավոր ընտանիքներին: Հոգևոր ծառայություն սկսվեց իրականացվել նաև Զինված ուժերում:

Ալեքսի Երկրորդի դերը մեծ է նաև Հայ և Ռուս Եկեղեցիների ավանդական պատմական հարաբերությունների առավել զորացման և ամրապնդման գործում:

Հիշատակելի է հատկապես երջանկահիշատակ Պատրիարքի մասնակցությունը Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի հանդիսություններին, որի շրջագծում 2001 թ. սեպտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ կատարեց օծումը Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու:

Երջանկահիշատակ Պատրիարքի դերը մեծ է նաև Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում, որի շրջագծում իր նախաձեռնությամբ Մոսկվայում մի քանի հանդիպումներ տեղի ունեցան Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների միջև, որոնց ընթացքում հատուկ շեշտվեց հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու կարևորությունը ու անթույլատրելի համարվեց ռազմական գործողությունների վերսկսումը:

Ալեքսի Երկրորդը ի Տեր հանգյավ 2008 թ. դեկտեմբերի հինգին: